«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Առարկան՝ Հայոց եկեղեցու պատմություն
Հետազոտող ուսուցիչ՝ Լուսինե Հարությունյան
Ուսումնական հաստատություն՝ Արևշատի միջնակարգ դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ……5

ԳԼՈՒԽ 1

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԵՎ ԱՌԱԿ ԳՐԱԿԱՆ ՏԵՍԱԿԸ

1.1 ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՌԱԿՆԵՐ……7

ԳԼՈՒԽ 1.2

ԱՌԱԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ……13

ԳԼՈՒԽ 2

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍ……15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ……19

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից մանկավարժությունը հակված է կրթության բովանդակությունը մեկնաբանելու որպես մանկավարժականացված սոցիալական փորձ, կամ սոցիալական փորձի մանկավարժական մոդել: Սա նշանակում է, որ կրթության բովանդակության մեջ պետք է արտացոլվի տվյալ հասարակության կուտակած մշակութային արժեքները, այնպես որ սովորողները ձեռք բերեն ոչ թե վերացական, կյանքից կտրված ինչ-որ գիտելիքներ ու կարողություններ, այլ կարողանան ներքնայնացնել առկա մշակութային արժեքներն ու ապրել դրանցով: Այսպիսով, մանկավարժական նոր մոտեցումները պահանջում են մի կողմից ձևավորել մարդուն անհրաժեշտ գիտելիքներ ու կարողություններ, մյուս կողմից մարդուն հասարակության լիարժեք անդամ դարձնելու համար զարգացնել այնպիսի որակներ, ինչպիսիք են քննադատական մտածողությունը, համագործակցային կարողությունները, ինքնուրույնությունը, հավակնությունների մակարդակը, ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու ու վճիռներ կայացնելու հմտությունները: Այս հարցում կառանձնածնենք աստվածաշնչյան առակները, որոնք հիանալիորեն կրթում և դաստիարակում են աշակերտներին և ինչու չէ նաև հասուն մարդուն: Հետազոտական աշխատանքի ընթացքում անդրադարձ ենք կատարում ինչպես ծրագրային աստվածաշնչյան առակներին , այնպես էլ այն դաստիաչակճական նշանակություն ունեցող հատնընտիր առակներ, որոնք արտադասարանական ընթերցանության խթանման միջոց են և կարող են նախագծային աշխատանքի հիմք հանդիսանալ: Սահմանենք այս հետազոտական աշխատանքի իրականացման նպատակներն ու խնդիրները:

**Հետազոտության նպատակն է՝** բացահայտել աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը:

Հետազոտության խնդիրներն են՝

**Հետազոտության խնդիրներն են՝**

- ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,

- սահմանել Ատվածաշնչյան առակների դերն ու նշանակությունը սովորողների կյանքում,
- առանձնացնել այն Աստվածաշնչյան առակները, որոնք սովորողները լավագույնս կյուրացնեն ՝ ելնելով նրանց տարիքային առանձնահատկություններից։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Աստվածաշունչը՝ Աստծու ներշնչանքով գրված «Սուրբ գիրք»-ը, համարվում է ցանկացած կրոնական համակարգում բացառիկ հեղինակություն վայելող և սրբություն համարվող գրությունների ամբողջություն։

Քրիստոնեական գաղափարախոսությունները դեռևս բազմաթիվ դարեր առաջ ձևակերպել են խոսքի ու գործի, սոցիալական դիրքորոշման և վարքի փոխհարաբերության հոգեբանական և մանկավարժական խնդիրներ, որը հատուկ ուսումնասիրության առարկա դարձավ միայն 20-րդ դարում[1]։

Աստվածաշնչից մենք ճանաչում ենք Հիսուս Քրիստոսին՝ Աստծո որդուն, ով սովորեցնում է մեզ՝ ինչպես ճշմարիտ կերպով հետևել Աստծուն։ Նա իրականացրել է մարդկանց բժշկումներ, սովորեցրել է առակներով և իր շուրջը հավաքել հետևորդներ։ Նա սիրում էր մարդկանց սովորեցնել և խրատել առակներով, որովհետև դրանք միանգամայն հասանելի էին բոլորին, պարզ են և ունեն դաստիարակչական , խրատական մեծ նշանակություն։Բացի այն , որ առակներն ունեն դաստիարակչական մեծ նշանակություն ,այլև քննադատական, խրատական, հաճախ երգիծական բնույթ։ Հիսուսի առակները պարզ էին և մատչելի բոլորի համար, առակը պատմելուց հետո նա նաև սկսում էր մեկնաբանել , որպեսզի էլ ավելի հասանելի դարձնի առակի բովանդակությունը։ Այսօր հանրակրթական դպրոցի տարբեր դասարաններում մենք անցնում ենք «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան, որի դասաժամերին անդրադառնում ենք նաև Աստվածաշնչին, քրիստոնեական կրոնին, նրա անցած ուղուն, Հիսուսի առակներին և այլն։

Աստվածաշնչյան առակների ուսուցումը հարկավոր է իրականացնել առաջին դասարանից և քայլ առ քայլ հասցնել նրան, որ երեխան ինքնակամ, տանը բացի և ընթերցի իր ընտրությամբ ցանկացած առակ, կամ էլ վերհիշելու նպատակով կրկին ընթերցի առակը։ Աստվածաշնչում նշվում է, որ Հիսուսը առակների միջոցով

[1]Նալչաջյան Ա. Ա., Սոցիալական հոգեբանություն, Երևան, 2003, էջ 45,

սովորեցնում էր մարդկանց[2]։

Շատ մանկավարժներ կարծում են, որ կրտսեր դպրոցում պետք է սովորեցնել գեղարվեստական տեքստի դանդաղ ընթերցանություն, որպեսզի երեխան կարդալու ընթացքում կարողանա մտածել յուրաքանչյուր բառի իմաստի շուրջ , կարողանա հարցեր տալ և գտնել դրանց պատասխանները, կարողան կարդացածի տարրական վերլուծություն կատարել։ Պետք է ընդունել, որ երեխային մենք կարդալ ենք սովորեցնում ոչ թե մեզ համար, այլ իր[3] ։ Իսկ ահա Աստվածաշնչյան առակներին ծանոթացնելը պետք է սկսել տարրական դասարաններից, այդպիսով սեր արթնացնելով նաև դեպի Աստվածաշունչը և մեր կրոնը։ Եթե քրիստոնեական մանկավարժության մեջ ընդունվում է , որ ներողամտությունը որոշ դրական ազդեցություն է գործում մարդու հոգեկան զարգացման վրա, ապա միաժամանակ հստակորեն գիտակցվում է, որ անպիտան մարդուն վերադաստիարակելը գործնականում անհնարին է։ Դեռևս Սողոմոն Իմաստունն է հասկացել, քններով մարդկային մոլորությունները, որ խեղաթյուրվածին հնարավոր չէ ուղղել, միակ հույսը երեխաներին կրթելն է։ «Պատանուն կրթիր նրա ուղու սկզբում, նա դրանից չի շեղվի մինչև անգամ, երբ մեծանա»(Առակ., ԻԲ,6)։ Այս միտքը ճիշտ է համարել նաև Յան Ամոս Կոմենսկին[4]։

Իսկ մեծերն էլ, եթե ցանկանում են հայտնվել երկնային թագավորությունում , պետք է դարձի գան և դառնան երեխաների պես անպիղծ։ Քրիստոսը մեծահասակներից պահանջում էր լինել երեխաների պես, ձեռք քաշել չարից,լինել պարզ, հեզ, հնազանդ, խոնարհ և մաքուր։

---

[2]Մանուկների Աստվածաշունչ,, Ավետարան ըստ Մաթևոսի 13 :24-50, էջ 346,

[3] Ամիրջանյան Ա., Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան , 2005,

[4] Կոմենսկի Յ. Ա. Մեծ դիդակտիկա, Երևան, 1962, էջ 61,

ԳԼՈՒԽ 1

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԵՎ ԱՌԱԿ ԳՐԱԿԱՆ ՏԵՍԱԿԸ

## 1.1 ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՌԱԿՆԵՐ

Աստվածաշնչյան առակները կյանքի զանազան ճշմարտություններ արտահայտող առակներ են, որոնք օժտված են պատկերավոր մտածողությամբ, հակիրճ են, ուսանելի և ունեն գեղարվեստական մեծ արժեք: Այս առակները հիանալի տարբերակ են սովորողների կրթության և դաստիարակության գործընթացը համակարգելու և կազմակերպելու համար: Իսկ ինչո՞ւ ստեղծվեցին առակները: Սրա բացատրությունը հետևյալն է՝ մարդ արարածը սիրում է սովորել օրինակներով: Ընդօրինակելը նրա համար ավելի հեշտ է ,քան վերացական խրատը: Առակն ունի դաստիարակչական նպատակ , այն օգնում է մարդուն իրական կյանքում ավելի հեշտ ապրելու. ահա այս առումով էլ առակները հին ժամանակներից մինչև օրս սիրված են և շարունակում են մնալ որպես գրական տեսակ: Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությանն անդրադառնալիս, բավական է հիշել , թե Հիսուսը Ավետարանում որքան է խոսել առակներով: Որեմն առակն ուներ կենսական նշանակություն: Քրիստոսը շատ լավ իմացել է ուրիշի վիճակի մեջ մտնելու , իրադրությանը ուրիշի աչքերով նայելու երևույթը, որն այժմ սոցիալական հոգեբանները դերի ընդունման հիման վրա առաջացող էմպաթիա են անվանում: Էմպաթիան, կամ հուզական ապրումակցումը, հնարավոր է դառնում, եթե կարողանում եք երևակայությամբ ընդունել ուրիշի դերը, հասկանալ նրա ապրումներն ու տոգորվել դրանցով[5]:

Այստեղից էլ քրիստոնեական դաստիարակության ոսկե օրենքը. «Այն ամենը, ինչ որ կամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դուք արեք նրանց, որովհետև այդ իսկ են օրենքն ու մարգարեները»: Իսկ Աստվածաշնչում ասվում է.«Երուսաղեմում Իսրայելի թագավոր Սողոմանի՝ Դավթի որդու առակները՝ ճանաչելու իմաստությունն ու խրատը, հասկանալու խոսքերը հանճարեղ, ընկալելու խոսքի դարձվածքները, ուսանելու ճշմարիտ արդարությունը և ուղղվելու դեպի իրավունքը, անուսումներին տալու խորագիտություն, երիտասարդներին՝ գիտելիք և կողմնորոշում: Քանզի դրանք լսելով՝ իմաստունն ավելի կիմաստանա, կրթյալը կստանա կյանքի ուղեցույց: Սրանով մարդ կհասկանա իմաստունների խոսքերը՝ նրանց իմաստուն խոսքերը, նրանց առակները, նրանց

[5]Նալչաջյան Ա. Ա. Հոգեբանության հիմունքներ, Երևան, 1997, էջ 125,

այլաբանություններն ու հանելուկները»[6]

Աստվածաշնչյան առակները տեղ են գտել հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի Հայոց եկեղեցու պատմության դասագրքում: Դրանք ներկայացվում են մանրամասնորեն և մեկնաբանվում դասագրքի հեղինակների կողմից : Պետք է նշենք նաև, որ հրաշալի հարցմամբ խոսք է ուղղվում նաև աշակերտներին և նրանց հնարավորություն է տրվում նաև ինքուրույն մեկնաբանել առակը և գտնել որոշ հարցերի պատասխաններ: Անդրադառնանք դասագրքում տեղ գտած աստվաշաշնչյան առակներին:

Դրանք են՝

Լավ ընկերները[7]

Որդիները[8]

Ամենամեծ նվերը[9]

Պարկեշտություն և գոռոզություն[10],

Սերմնացանի առակը[11]

Որոմների առակը[12]

---

6 Աստվածաշունչ մատյան,Հին և Նոր Կտակարանների արևելահայերեն նոր խմբագրություն, Մայր Աթոռ Ս. Էջմիածին , Հայաստանի Աստվածաշրնյան ընկերություն, 2017,էջ 667,

7 Վարդան ԵՊՍ. Նավասարդյան, Վարդան Ղանդիլյան, Աշոտ Ղուկասյան, Վարդան Պարսամյան, Հայոց եկեղեցու պատմություն,5-րդ դասարան, Երևան, 2019, էջ 52,

8 Նույն տեղում, էջ 62,

9 Նույն տեղում ,էջ 63,

10 Նույն տեղում,էջ 64,

11 Նույն տեղում, Էջ 66

12 Նույն տեղում ,Էջ 70

Առակ բարի սամարացու մասին[13]

Մոլորյան որդու վերադարձը[14]

Արդար հատուցում[15]

Ներկայացնենք դրանցից մի քանիսը և օրինակելի դասի միջոցով անդրադառնանք այս առակների դաստկարակչական նշանակությանը:

***Սերմնացանի առակը***

***նկար 1***

Հիսուս Քրիստոսը, Իր մտքերն ավելի հասկանալի և տպավորիչ դարձնելու համար, մարդկանց հետ զրուցելիս և քարոզելիս խոսում էր նաև առակներով, որոնց օրինակները վերցված էին իրական կյանքից և կենցաղից:

Մի անգամ Հիսուսն Իր շուրջը հավաքված մարդկանց պատմեց հետևյալ առակը.

Մի մարդ սերմեր է ցանում իր արտում: Ցանելիս սերմերի մի մասն ընկնում է ճանապարհի եզրին, և թռչունները ուտում են դրանք: Այն սերմերը, որ ընկնում են *ապառաժի վրա*, շուտ ծլում ու կանաչում են, բայց արևը ծագելուն

---

[13] նույն տեղում, էջ 72 ,

[14]Նույն տեղում, Էջ 76 ,

[15]Նույն տեղում,Էջ 78

պես չորանում են, քանի որ խորը արմատներ չեն ունենում: Որոշ սերմեր ընկնում են փշերի ու մոլախոտերի մեջ ու թեև ծլում են, բայց չեն հաջողում մեծանալ, քանի որ փշերը խեղդում են դրանց: Եվ, վերջապես սերմերի այն մասը, որ ընկնում է պարարտ հողի մեջ, աճելով՝ առատ բերք է տալիս:

Քանի որ հավաքվածները լավ չհասկացան առակի իմաստը, Հիսուսը *մեկնաբանեց այն* ՝ասելով, որ սերմնացանը նման է Իրեն՝ Հիսուսին, իսկ սերմերը՝ Աստծո խոսքին, Իր քարոզներին:

Ճանապարհին ընկած սերմերը նման են այն մարդկանց, ովքեր լսում են Աստծո խոսքը, բայց ուշադրություն չեն դարձնում: Ապառաժին ընկած սերմերը բնութագրում են նրանց, ովքեր լսում են Աստծո խոսքը, իսկույն ուրախությամբ ընդունում այն, բայց քանի որ նրանց *հավատն ամուր հիմքեր չունի*, դժվարության կամ նեղության ժամանակ շեղվում են ճիշտ ճանապարհից:

Փշերով ու մոլախոտերով լի հողի մեջ ընկած սերմերը նմանվում են այն մարդկանց, ովքեր լսում են Աստծո խոսքը, ցանկանում են հետևել նրան, բայց կյանքի դժվարությունները, հարստության հրապույրն ու այլ ցանկություններ գրավում են նրանց, չեն կարողանում ազատվել վատ սովորություններից, որոնք էլ փշերի նման խեղդում են Աստծո խոսքը: Իսկ պարարտ հողում հայտնված սերմերը նման են այն մարդկանց, ովքեր լսում և պահում են Աստծո խոսքը: Այդպիսի մարդկանց գործերը բարի պտուղներ են տալիս:

### *Բարի սամարացու առակը*

*նկար 2*

Մի օրենսգետ Հիսուսին փորձելով ասաց. «Վարդապետ, ի՞նչ պետք է անեմ, որ հավիտենական կյանքը ժառանգեմ»: Հիսուսը նրան պատասխանեց . «Ի՞նչ է գրված օրենքի մեջ»:

Օրենսգետը պատասխանեց. «Քո Տեր Աստծուն սիրիր ամբողջ հոգով, ամբողջ սրտով, ամբողջ ուժով ու ամբողջ մտքով: Եվ քո ընկերոջը սիրիր քո անձի պես»:

Հիսուսը նրան ասաց. «Դու ճիշտ պատասխանեցիր: Եթե այդպես վարվես, կապրես»: Եվ օրենսգետը հարցրեց. «Ո՞վ է իմ ընկերը»: Հիսուսը նրան մի առակ պատմեց բարի սամարացու մասին:

«Մի մարդ Երուսաղեմից գնալիս ընկնում է ավազակների ձեռքը, որոնք հանում են նրա հագուստները, վիրավորում ու կիսամեռ վիճակում թողնում: Պատահաբար մի քահանա է անցնում այդ ճանապարհով և տեսնում է նրան, բայց կողքով անցնում է ու գնում: Նմանապես մի տաճարի ծառայող լինում է այնտեղ, մոտենում է, նայում և անցնում գնում: Իսկ մի սամարացի այնտեղով անցնելիս տեսնում է նրան, խղճում է ու մոտենում, նրա վերքերին յուղ ու գինի է քսում: Վերքերը կապելուց հետո նստեցնում է իր էշի վրա և հյուրանոց է բերում: Հաջորդ օրը գնալուց առաջ երկու դինար է հանում (հռոմեական փող, որն այդ ժամանակ շրջանառության մեջ էր Իսրայելում), տալիս է հյուրանոցի տիրոջը ու ասում. «Այս մարդուն խնամիր: Իսկ եթե ծախսդ ավելի լինի, քան այն, ինչ տալիս եմ քեզ, վերադարձիս կտամ»:

Առակը պատմելուց հետո Հիսուսը օրենսգետին հարցրեց. «Քո կարծիքով այս երեքից ո՞ր մեկն էր ավազակների ձեռքը ընկածի մերձավորը»:

Օրենսգետը պատասխանեց. «Նրան օգնություն ցույց տվողը»: Այդ ժամանակ Քրիստոսը նրան ասաց. «Գնա և դու էլ այնպես վարվիր, ինչպես վարվեց այդ սամարացին»:

*Որոմների առակը*

*նկար 3*

Այս առակը պատմում է մի ագարակատիրոջ մասին, որը ցորեն է ցանում իր հողատարածքում: Սակայն չարակամ մարդիկ գիշերով գալիս և որոմ են շաղ տալիս ցորենի արտում: Որոշ ժամանակ անց, երբ սերմերը ծլում են և կանաչում, ագարակատիրոջ մշակները, զարմանալով, թե որտեղից հայտնվեցին որոմները, առաջարկում են տիրոջը մաքրել դրանք: Սակայն ագարակատերը թույլ չի տալիս՝ ասելով, որ որոմները մաքրելիս կվնասվեն նաև նոր ծլած ցորենի հասկերը և պետք է սպասել, որ ցորենը հասունանա, և այդ ժամանակ ցորենը հեշտությամբ կհնձեն և կամբարեն, իսկ որոմները՝ կայրեն: Առակի մեկնաբանությունը հետևյալն է. ագարակատերը նման է Հիսուսին, իսկ *ագարակը՝ աշխարհին:* Ցորենի սերմերը **բարի**, իսկ որոմի սերմերը **չար** մարդիկ են: Բարի մարդկանց գործերը բարի պտուղներ են տալիս, չարերինը՝ չար: Ցորենն ու որոմն առանձնացնելը նշանակում է, որ **ամեն մարդ իր գործերի համար արժանի հատուցում պետք է ստանա**: Իսկ չար մարդիկ միանգամից չեն պատժվում, քանի որ այդ դեպքում հնարավոր է նեղություն կամ վիշտ պատճառել նաև բարի մարդկանց: Ու բացի այդ, յուրաքանչյուրին ժամանակ է տրվում **զղջալու և ուղղվելու համար**:

ԳԼՈՒԽ 1.2

ԱՌԱԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առակ,որը բառացիորեն նշանակում է առ ակն՝ աչքի առաջ, բարոյախոսական բնույթի գրական ստեղծագործություն է, որտեղ այլաբանության միջոցով ներկայացվում, ծաղրվում և քննադատության են ենթարկվում մարդկանց արածները։

Առակի վերջում սովորաբար հեղինակը դրսևորում է իր հստակ վերաբերմունքը նկարագրածի հանդեպ, որն էլ առակի բարոյախոսությունն է։ Առակի հերոսները կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներ են, իրեր, լուսատուներ և այլն։ Անտիկ շրջանում և միջնադարում առակները արձակ ժանրի ստեղծագործություններ էին, սակայն հետագայում դրանք սկսեցին գրվել չափածո։

Առակի վարպետներ են Եզոպոսը, Ֆեդրոսը, Ժան դը Լաֆոնտենը, Իվան Կռիլովը, հայ հեղինակներից՝ Մխիթար Գոշը, Վարդան Այգեկցին, Խնկո Ապերը։

Առակը բաղկացած է 2 մասից՝ սյուժեից և բարոյախոսությունից։ Սյուժեն դեպքերի, իրողությունների սեղմ շարադրանքն է, իսկ բարոյախոսությունը՝ առակի սկզբում կամ մեծ մասամբ վերջում արտահայտված եզրակացությունը։ Առակի հերոսը մարդն է, ում կյանքի, բնավորության հոռի և բացասական գծերը ծաղրվում են այլաբանորեն։ Առակներում կենդանիներն ու բույսերը խոսում են մարդկային լեզվով, աշխատում են, օգնում կամ խանգարում միմյանց։ Առակներում գովաբանվում և խրախուսվում են լավը, բարին, բարոյականությունը, ջանասիրությունը, ազնվությունը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, գեղեցիկը, մարդկայինը և, ընդհակառակը, ծաղրվում ու դատապարտվում են վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը, դավաճանությունն ու վախկոտությունը։ Հնում «առակ» բառը նշանակել է նաև խրատ, իմաստություն։ Այդպիսիք են Աստվածաշնչում պահպանված Սողոմոնի առակները, որոնք մեծ ազդեցություն են թողել գրեթե բոլոր ժողովուրդների մտածելակերպի վրա։ Առակների առաջին հայտնի հեղինակը հույն Եզոպոսն է։

*Առակը* ժողովրդական բանահյուսության հնագույն տեսակներից է և առկա է գրեթե բոլոր ժողովուրդների բանավոր ստեղծագործության մեջ։ Այն այլաբանական

բովանդակություն ունեցող փոքրածավալ պատմողական ստեղծագործություն է, որում հաճախ մարդկանց փոխարեն հանդես են գալիս կենդանական, բուսական աշխարհի ներկայացուցիչներ, տիեզերական մարմիններ, որոնք անձնավորված են: Նրանց փոխհարաբերություններն այլաբանորեն ներկայացնում են մարդկային կյանքի զանազան խրատական, հաճախ երգիծական բովանդակություն: Հայ գրավոր գրականության մեջ առակները թափանցել են միջնադարում. գիտնական, պետական գործիչ, մանկավարժ Գրիգոր Մագիստրոսն իր թղթերում օգտագործել է ամենատարբեր առակներ: Նա, ինչպես երևում է իր նամակներից մեկի մեջ, պատվիրում է դպրոցներում աշակերտներին սովորեցնել քերականության և ճարտասանության հետ նաև առասպելավարժություն, այսինքն՝ աշակերտներին գրել, անգիր անել և մեկնել տալ առակներ, որը շատ հարմար վարժություն է եղել ապագա մեկնաբաններ պատրաաստելու համար: Ինչ վերաբերում է ժողովրդական առակներին, որոնցից մի քանիսը պատահաբար մեջ են բերում հին հեղինակները, նույն բախտն են ունեցել, ինչ-որ մեր հին ժողովրդական բանահյուսությունն ընդհանրապես: Դրա պատճառն այն է, որ առակները եկեղեցականների կողմից ոչ միայն արհամարհված են եղել իբրև գեղջկական, ուստի անարժեք բաներ, այլև իրենց աշխարհիկ բնավորության պատճառով հալածված: Զանազան տեսակի զուշակություն անողների հետ, ինչպես են *«հաւահմայք»*, *«հացահմայք»*, *«հատահարցք»*, մերժված և հաղորդության անարժան են համարել նաև *«զբախաւսք, զրատեսք, շրջողք տանէ ի տուն, հետաքրքիրք, զրուցատարք, առասպելախաւսք»*: Վերջինը վերաբերում է առակախոսներին. հայերեն *«առասպել»* բառը, բացի իր իսկական նշանակությունից, գործածվում է նաև իբրև առակ:

Մեծ դժվարությամբ, ուրեմն, առակի տեսակը մուտք է գործում գրավոր գրականության մեջ: Եվ վերջապես 12-13-րդ դարերում արդեն հանդես են գալիս հայ նշանավոր առակագիրներ Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին: Մխիթար Գոշն առակների մեջ տեսնում է բնականաբար 2 մաս՝ բուն պատմվածքը և խրատական եզրակացությունը

ԳԼՈՒԽ 2

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍ

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Առարկա՝ Հայոց եկեղեցու պատմություն

Դասարան՝ 5-րդ

Թեման ՝ Ճշմարիտ բարեկամը[16]

Ժամաքանակը ՝ 1 դասաժամ

Նպատակը կամ ուսումնառության ակնկալվող արդյունքները՝

ա) Գիտելիքներ

աշակերտը պետք է իմանա՝

- առակի բովանդակությունը
- Բարեկամության կամ ընկերության մասին առածներ.
- Հիսուսի մեկ ուրիշ պատմություն կամ առակ

բ) կարողություններ և հմտություններ

աշակերտը պետք է կարողանա՝

- Սահուն և հասկանալով ընթերցել բնագիրը.
- Տրամաբանական հաջորդականությամբ վերարտադրել պատմության դեպքերը.
- Նկարագրել և բնութագրել գործող անձանց.
- Ներկայացնել իր հնարավոր գործողությունները համանման իրավիճակում
- Տրամաբանված ինքնուրույն խոսք կառուցել («Քարսիրտ մարդու վերջը» վերնագրով շարադրություն գրել).

գ) Արժեքային համակարգ
աշակերտը պետք է՝

- Գնահատի գործող անձանց բնորոշ հատկանիշները(անտարբերություն, եսասիրություն, անազնվություն) և վերաբերմունք դրսևորի դրանց նկատմամբ.
- Կարևորի մարդասիրությունը, ազնվությունը, սրտացավությունը, ուրիշին օգնելու ձգտումը, ձգտի ազնիվ ու մարդկային լինել իր արարքների մեջ:

Մեթոդները՝ զրույց, Նշիր երկու բան, Ճրջագայություն պատկերասրահում, դերային խաղ, ուղղորդված ընթերցանություն, «Լուսաբանել այս առակի փաստերը»:

16 Տես ՝Վարդան ԵՊՍ. Նավասարդյան, Վարդան Ղանդիլյան, Աշոտ Ղուկասյան, Վարդան Պարսամյան, Հայոց եկեղեցու պատմություն,5-րդ դասարան, Երևան, 2019, էջ 73,

Դասի ընթացքը

Խթանման փուլ

Մտագրոհի միջոցով բացահայտել աշակերտների մտքում ընկեր բառի առաջացրած զուգորդումները: Պաստառի վրա պատկերել աշակերտների նշած հասկացությունները ներկայացնող գծապատկեր:




Իմաստի ընկալման փուլ

Պատմության ընթերցում ՝ կանխագուշակության աղյուսակի կիրառմամբ(4 մասով):

Բնագրային աշխատանք՝

Տեքստային աշխատանք

Բնագիրը բաժանում ենք 4մասի և ընթերցում դադարներով: Ընթերցելու ընթացքում ՝իր նշած համապատասխան հատվածին հասնելուց հետոուսուցիչը կանգ է առնում և հարցեր ուղղում երեխաներին.

1-ին դադար՝ մինչ առակի ընթերցումը.

Հարց՝ Ի՞նչ եք կարծում ,ով է ընկերը, վերը նշված գծապատկերով արդեն կարողանում են բնութագրել:

Սա նպաստում է աշակերտների կանխատեսումների զարգացմանը և ենթադրություններ են անում, որը զարգացնում է նրանց բանավոր խոսքը:

2-րդ դադար՝ հրեա հոգևորականի հետ հանդիպումը.

Հարց ՝ ի՞նչ եք կարծում օգնեց հրեա հոգևորականը:

Շարունակում ենք ընթերցանությունը.

3-րդ դադար՝ հրեա պաշտոնյային հանդիպելը:

Հարց՝ ի՞նչ եք կարծում՝ նա օգնեց վիրավորին:

4-րդ դադար՝ սամարացու օգնությունը

Հարց ՝ ի՞նչ ենթադրություն արեցիր այս պատմությունից, առակն ի՞նչ է սովորեցնում:

Կշռադատման փուլ

Դասարանը բաժանում ենք 4 խմբի ,իրականացնում ենք «շրջագայություն պատկերասրահում »

Առաջին խմբին հանձնարարվում է նկարել վիրավորին և ավազակներին.

2-րդ խմբին հանձնարարում ենք նկարել վիրավորի և հրեա հոգևորականի հանդիպումը,

3-րդ խմբին՝ հրեա պաշտոնյայի և վիրավորի հանդիպումը.

4-րդ խմբին՝ վիրավորի և բարի սամարացու հանդիպումը:

Ժամանակը լրանալուն պես ուսուցիչը շրջում է պատկերասրահում , ամեն խումբ ներկայացնում է իր աշխատանքը: Դեպքերի հաջորդականությամբ վերարտադրվում է առակի բովանդակությունը:

Աշակերտները պաստառները փակցնում են միմյանց հաջորդականությամբ:

Անդրադառնում ենք առակի մեկնաբանությանը: Ուսուցիչը ներկայացնում է ճշմարիտ բարեկամին:

Իրականացնում ենք դերային խաղ, որից հետո սովորողները ներկայացնում են այդ օրվա դասը, ինչ սովորեցին, ինչ նոր բան իմացան,ինչպիսին պետք է լինի իսկական ընկերը,նրանք որպես ընկեր ինչպիսին պետք է լինեն:

Դասի կշռադատման փուլն ավարտվում է «Լուսաբանել այս առակի փաստերը» խմբային կամ զույգային աշխատանքով:

Աշակերտներին բաժանում ենք թղթեր հետևյալ բովանդակությամբ;

Առակի վերնագիրը----------

Հեղինակ----------

Կերպարներ----------

---

Միջավայր----------

Առակի գաղափարը, գլխավոր միտքը----------
---
---

Աշխատանքը կատարելուց հետո խմբերը կարդում են իրենց գրածները և անցկացնում ենք քննարկում:

| Կերպար | Ֆիզիկական նկարագրություն | Կերպարի վարքագիծը | Բնութագրեք, թե ինչու նա այդպես վարվեց, իսկ դու |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| | | | ինչպե՞ս կվարվեիր: |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

Տնային աշխատանք՝ ընթերցել հետևյալ առակները Մանուկների Աստվածաշնչից:

Առակ անմիտ հարուստի մասին

Առակ կորած ոչխարի մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աստվածաշնչյան առակներով մենք դաստիարակում ենք բարոյական բարձր զարգացման տեր , հոգեպես հասուն և առողջ մարդ:
2. Երեխաները սիրով են սովորում առակները, յուրացնում նրանց բարոյա-խրատական դասերը, փորձում են գտնել նմանօրինակ երևույթներ իրենց շրջապատող միջավայրում:

3. Երեխաները շատ են ոգևորվում, երբ առակը կատարում են դերերով և իրենց երևակայության մեջ նույնանում են տվյալ հերոսի հետ:

4. Ուսուցման տեխնոլոգիան կամ կիրառվող մեթոդները լավագույնն են, եթե լավագույնս նպաստում են մարդու ինքնուրույնության ձևավորմանը, հիմնարար գիտելիքների ձեռքբերմանն ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ամիրջանյան Ա., Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան , 2005,

Աստվածաշունչ մատյան,Հին և Նոր Կտակարանների արևելահայերեն նոր խմբագրություն, Մայր Աթոռ Ս. Էջմիածին , Հայաստանի Աստվածաշրնյան ընկերություն, 2017,

Կոմենսկի Յ. Ա. Մեծ դիդակտիկա, Երևան, 1962,

Մանուկների Աստվածաշունչ,, Ավետարան ըստ Մաթևոսի 13 :24-50,

Նալչաջյան Ա. Ա. Հոգեբանության հիմունքներ, Երևան, 1997,

Նալչաջյան Ա. Ա., Սոցիալական հոգեբանություն, Երևան, 2003,

Նավասարդյան Վարդան ԵՊՍ. , Վարդան Ղանդիլյան, Աշոտ Ղուկասյան, Վարդան Պարսամյան, Հայոց եկեղեցու պատմություն,5-րդ դասարան, Երևան, 2019,